Վանաձորի Դ.Վարուժանի անվան

№16 հիմնական դպրոցի տնօրեն՝

_____ Ն.Հարությունյան

Կ. Տ. «31» _____08_____ 2022թ.

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ

Դ.ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՆՎԱՆ №16 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի

Բնագիտական

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ՈՒՍՏԱՐԻ

ՄՄ Նախագահ՝ /Ն. Պետրոսյան/

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ – ԾՐԱԳԻՐ

№	Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող
1.	Հրավիրել մեթոդական միավորման ամենամսյա նիստեր (անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ): Նախապես պլանավորել օրակարգերը և արձանագրել գրանցամատյանում:	ամիսը մեկ անգամ	մասնախմբի ղեկավար
2.	Հետևողականորեն տեղեկանալ և մասնախմբի անդամներին հաղորդակից դարձնել ՀՀ ԿԳՄՄՆ հրապարակած բոլոր որոշումներին, գիտատեխնիկական առաջընթացի և բնագիտական առարկաների դասավանդմանն ուղղված բոլոր հնարավոր փոփոխություններին: Հետագա աշխատանքները հարմարեցնել դրանց:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
3.	Քննարկել և հաստատման ներկայացնել բնագիտական առարկայական մեթոդական միավորման աշխատանքային տարեկան պլանը, որի դրույթները բխում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից: Ուստարվա աշխատանքները կազմակերպել ըստ այդ պլանի:	օգոստոս ուստարվա ընթացքում	տնօրեն, մասնախմբի ղեկավար, անդամներ
4.	Քննարկել առարկայական ուսումնական ծրագրերը, չափորոշիչները, մեթոդական ձեռնարկները, դասագրքերը և դրանցում կատարված փոփոխությունները:	օգոստոս/ ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
5.	Կատարել 2022-2023 ուստարվա նախնական դասաբաշխում և առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
6.	Դպրոցի տնօրենին առաջարկություն ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ (հիմք ընդունելով ԿԳՄՄՆ ցուցումները, առարկայական ծրագրային նյութերի ծանրաբեռնվածությունը, մասնախմբի դիտարկումները և դպրոցի նախասիրությունները):	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
7.	Քննարկել հանրակրթական դպրոցում կիրառվող գնահատման տեսակները, դրանց կիրառման նպատակահարմարությունն ու առանձնահատկությունները մասնախմբի առարկաների դասերին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ

8.	Առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍՆ հաստատված ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ և մեթոդական ցուցումներով, քննարկել և մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել առաջարկություն տարբեր տեսակի աշխատանքների նվազագույն քանակի վերաբերյալ: Թեմատիկ պլանները կազմելիս հիմք ընդունել դրանց վերաբերյալ մանկավարժական խորհրդի կողմից հաստատված որոշումը և ուսումնական տարվա ընթացքում առաջնորդվել դրանով:	օգոստոս/ ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
9.	Քննարկել թեմատիկ պլանների կազմման վերաբերյալ ԿԶՆԱԿ-ի առաջարկած ուղեցույցները, ուղղորդել ուսուցիչներին թեմատիկ պլաններում առանձնացնել տվյալ թեմայի դասավանդման նպատակները և ակնկալվող վերջնարդյունքները, որոնք բխում են պետական առարկայական չափորոշչային պահանջներից:	օգոստոս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
10.	Քննարկել մասնախմբի առարկայական տարեկան թեմատիկ պլանների նախագծերը, դրանցում թեմաների նպատակահարմար բաշխվածությունը, համապատասխանությունը պետական առարկայական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի, օրացույցային աշխատանքային ժամաքանակի հետ: Ներկայացնել դրանք տնօրենի հաստատմանը:	ուստարվա սկզբին	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
11.	Դիտարկել ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքները՝ համագործակցելով դպրոցի ՄՀԱ թիմի հետ: Քննարկել և մանկավարժական խորհրդին ներկայացնել ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները /առարկայացանկը/:	ուստարվա սկզբին	մասնախմբի ղեկավար, անդամներ, ՄՀԱ թիմ
12.	Օժանդակել դասավանդող ուսուցիչներին ըստ հաստատված առարկայացանկի ԱՈՒՊ-ներ կազմելու հարցում՝ հիմք ընդունելով պետական առարկայական չափորոշչային պահանջները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների հիման վրա:	ուստարվա սկզբին	մասնախմբի ղեկավար, անդամներ, ՄՀԱ թիմ
13.	Առաջնորդվել հաստատված ԱՈՒՊ-ներով և մշտապես համագործակցել դպրոցի ՄՀԱ թիմի հետ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ, ՄՀԱ թիմ

14.	Կրթությունն ուղղելով սովորողի ինքնուրույն մտածողության, հետազոտական և վերլուծական մտքի զարգացմանը, քննարկել սովորողին տրվող առաջադրանքների ձևեր և մեթոդներ: Նպաստել, որ ուսումնական պրոցեսն ապահովվի դրանց կազմակերպման համար անհրաժեշտ կրթական նյութերով, որոնք կխթանեն սովորողների ընդհանուր զարգացումը, ինքնուրույն սովորելու հմտությունների և տեղեկատվության զանազան ձևերից օգտվելու հմտությունների ձեռքբերմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
15.	Հաճախակի կազմակերպել մեթոդական քննարկումներ, որոնց ընթացքում պարզաբանել դասի նպատակի, խնդիրների և վերջնարդյունքի բացահայտման, դրանց հստակ, պետական չափորոշիչներին համապատասխան ձևակերպման, դասի կառուցվածքի, դրա տարբեր փուլերի սահուն անցումների շուրջ: Քննարկել դասերի ընթացքում ուսուցանվող նյութերի ծավալի, հագեցվածության, միջառարկայական կապերի ամրապնդման, նպատակահարմարության և կրթության որակի բարձրացմանն ուղղված կարևոր հարցեր:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
16.	Մասնակցել կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին, զբաղվել ինքնակրթությամբ, իրազեկվել և տիրապետել համապատասխան առարկաների դասավանդմանն ուղղված փոփոխություններին, գիտության ու տեխնիկայի առաջընթացին, բնագիտական մասնախմբի առարկաների բնագավառում նորագույն նվաճումներին ու ձեռքբերումներին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
17.	Մոտիվացնել մասնախմբի ուսուցիչներին, նպաստել նրանց մասնագիտական կարողությունների աճին: Խրախուսել նրանց որակավորման բարձրացման, կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի ձեռքբերման գործում:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
18.	Խթանել ուսուցիչների կողմից տարբեր կրթական հարթակների կիրառումը ուսումնական պրոցեսում՝ ապահովելով տեղեկատվության զանազան ձևերից օգտվելու հմտությունների զարգացում:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ

19.	Իրականացնել ուսուցիչների փոխօգնություն աշխատանքում առկա դժվարությունների հաղթահարման նպատակով՝ կազմակերպել միասնական քննարկումներ բնագիտական առարկայական մեթոդական միավորման կազմում ընդգրկված բոլոր առարկաներից դասերի անցկացման սկզբունքների վերաբերյալ, օգնել հաղթահարել հնարավոր դժվարությունները:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
20.	Խթանել ուսուցիչների ստեղծագործական աշխատանքը, տանել մեթոդական աշխատանք սկսնակ ուսուցիչների հետ, կիսվել առաջավոր փորձով, ստեղծել նպաստավոր պայմաններ նրանց ինքնակրթության համար:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
21.	Օժանդակել և մասնակցել բոլոր համադպրոցական և ինչպես նաև առարկայական միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների անցկացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
22.	Հայտնաբերել բնագիտական առարկաներով հետաքրքրված աշակերտներին և ուղղորդված աշխատանք կազմակերպել նրանց հետ: Խթանել և նախապատրաստել աշակերտների մասնակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ կողմից կազմակերպվող առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
23.	Մշտապես նպաստել դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացին՝ նախապես պլանավորել անելիքներն ամսվա կտրվածքով, փոխտնօրենին ներկայացնել նախատեսվող տեսադասերի, նպատակային դասալսումների անցկացման ժամանակացույց:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
24.	Անցկացնել նպատակային պլանավորած դասալսումներ, քննարկել դրանք:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
25.	Մասնախմբի բոլոր ուսուցիչների կողմից փորձի փոխանակման և հարստացման նպատակով հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
26.	Կազմակերպել առարկայական շաբաթներ ըստ ժամանակացույցի: Նպաստել դպրոցում բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության զարգացմանը, խթանել սովորողների հետաքրքրությունը, նրանց ներգրավելով ուսուցման գործընթացի մեջ: Քննարկել, վերլուծել շաբաթների ընթացքում կատարված աշխատանքները:		ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
	1-ին կիսամյակ Բնագիտական առարկայական շաբաթ	17.10-21.10. 2022թ.	
	2-րդ կիսամյակ Բնագիտական առարկայական շաբաթ	13.03-17.03. 2023թ.	

27.	Առաջավոր փորձի ներկայացման նպատակով առարկայական շաբաթների շրջանակում նախատեսել բաց դասեր: Քննարկելով դրանք նպաստել ուսուցչի աշխատանքի արդյունավետության և դպրոցում կրթության որակի բարձրացմանը:		
	1. Բաց դաս քիմիայից. «Քիմիական բանաձևերի կազմում»	20.10 – 7ա	Ն. Շահինյան
	2. Բաց դաս աշխարհագրությունից. Գործնական աշխատանք «Բնական զոնաներ»	21.10 – 6բ	Շ. Ավագյան
	3. Բաց դաս կենսաբանությունից. «Ոսկրային ձկներ»	14.03 – 7բ	Ա. Գրիգորյան
	4. Բաց դաս բնագիտությունից. «Եղանակային օրացույց»	15.03 – 5ա	Ն.Պետրոսյան
	5. Բաց դաս ՆԶՊ-ից. «Տեղանքի տարատեսակները և մարտական հատկանիշները: Կողմնացույց»	16.03 – 8ա	Յ .Ղազարյան
28.	Արդի բնապահպանական խնդիրների պարզաբանման և միջառարկայական կապերի բացահայտման նպատակով կազմակերպել ինտեգրված դաս ֆիզիկա, կենսաբանություն և ՆԶՊ առարկաներից. «Մարդու օրգանիզմի վրա ռադիոակտիվ ճառագայթման ազդեցությունը: Ատոմային էներգետիկան և բնապահպանական խնդիրները»:	մայիս	Ն. Պետրոսյան Ա. Գրիգորյան Յ. Ղազարյան
29.	Իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակություն. դասղեկների հետ կազմակերպել 9-րդ դասարանցիների այց ազատամարտիկների պանթեոն, հարգանքի տուրք մատուցելու 44 օրյա պատերազմի հերոսներին:	26.09.2022թ.	Յ. Ղազարյան
30.	Սովորողներին պարբերաբար ծանոթացնել համաշխարհային և տարածաշրջանային արդի բնապահպանական խնդիրներին, աղետներին և դրանց ռիսկերին:		Յ. Ղազարյան
	1.Իրականացնել ԱԻՆ-2 հրշեջ փրկարարական ջոկատի կողմից դպրոցի անձնակազմի տարահանումը երկրաշարժի և հրդեհների ժամանակ:	13.10.2022թ.	
	2. Համագործակցելով դասղեկների հետ, դպրոցում նախաձեռնել ԱԻ տասնօրյակ, անցկացնել թեմատիկ դասղեկի ժամեր՝ գործնական և տեսական բնույթի, երեխաներին սովորեցնել բնական աղետներից պաշտպանվելու վարքականոններ:	1-17.03 2023թ.	

31.	Առարկայական շաբաթների ընթացքում իրականացնել տարբեր միջոցառումներ՝ բնապահպանական, անձնական հիգիենայի, առողջ ապրելակերպի և սպորտային թեմաներով.		
	1.Միջդասարանային սպորտլանդիա 7-րդ դաս. միջև. «Ուժեղների խաղ»	19.10.2022թ.	Ա. Քառյան
	2.Միջոցառում. «Մենք բնապահպան ենք»	20.10.2022թ.	Ա. Գրիգորյան Ն. Պետրոսյան
	3. Ստենդի ձևավորում. «Կանաչ մոլորակ»	17-21.10 2022թ.	մասնախումբ
	4.Ինտելեկտուալ խաղ. «Գիտելիքը փարոս»	16.03.2023թ.	Ն. Պետրոսյան Ա. Գրիգորյան
32.	Բնապահպանական դաստիարակության շրջանակներում կազմակերպել այցելություններ.		
	1.Էքսկուրսիա Վանաձորի բուսաբանական այգի /4-րդ դասարաններ /	26.09. 2022թ.	Ա. Գրիգորյան Ն. Պետրոսյան
	2. Այցելություն Մարգահովիտի Բնապահպանական կենտրոն /7-8 դասարաններ /	ըստ պայմանավ.	Ա. Գրիգորյան
	3.Այցելություն Պլանետարիում /5-րդ դասարաններ/	14-18.11. 2022թ.	Ն. Պետրոսյան
	4.Ուսուցողական էքսկուրսիա տարածքային հիդրոօդերևութաբանական կայան /5-րդ դասարաններ/	24-30.04. 2023թ.	Ն. Պետրոսյան
	5.Բնապահպանական էքսկուրսիա Ստեփանավանի դենդրոպարկ /6-րդ դասարաններ/	24-30.05. 2023թ.	Ն. Պետրոսյան
33.	Թարմացնել «Կանաչ մոլորակ»-ի էկոլոգիական օրացույցը՝ անդրադառնալով ջրի, օդի, մոլորակի, անտառի և այլ բնապահպանական բնույթի օրերին, որ նշում են աշխարհում: Ներկայացնել ժամանակակից աշխարհում գլոբալիզացիայի Կայուն զարգացման հեռանկարները:	ուստարվա ընթացքում	Ն. Պետրոսյան Ա. Գրիգորյան
34.	Կարևորելով ինքնուրույն աշխատանքների դերը սովորողի մտածողության և վերլուծական մտքի զարգացման գործում, քննարկել դրանց հանձնարարման առանձնահատկությունները:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
35.	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, սեմինարներ, ընթերցումներ, զեկույցներ, որոնք կնպաստեն ուսուցիչի աշխատանքի արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
	1. «Պրոբլեմային դասի կազմակերպումը քիմիայից»	հոկտեմբեր	Ն. Շահինյան
	2.«Այլընտրանքային մեթոդների կիրառումը կենսաբանության դասերին»	նոյեմբեր	Ա. Գրիգորյան

	3. «Անվտանգության ապահովումը դպրոցում»	դեկտեմբեր	Յ .Ղազարյան
	4. «Ընթերցանությամբ դասանյութի ընկալմանը նպաստող գործոնների զարգացումը բնագիտության դասավանդման ընթացքում»	հունվար	Շ. Ավագյան
	5. «Սովորողի հետաքրքրության խթանումը ֆիզիկայի դասավանդման ընթացքում»	փետրվար	Ն.Պետրոսյան
	6. «Սպորտային դաղարները ֆիզկուլտուրայի դասերին»	մարտ	Ա. Քառյան
36.	Համագործակցել դպրոցի մյուս առարկայական մեթոդական միավորումների հետ միջառարկայական կապերի ապահովման նպատակով:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
37.	Համագործակցել այլ դպրոցների հետ, իրականացնել փորձի փոխանակում, նպաստել ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
38.	Խթանել ուսուցիչների մասնակցությունն ու ակտիվությունը կրթական առցանց ծրագրերում (eTwinning Plus, e-School և այլն): Օժանդակել ուսուցիչներին ուսումնական նպատակներով կիրառել Google Classroom, Microsoft Teams և այլ կրթական հարթակներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
39.	Օժանդակել տնօրենությանը մասնախմբի առարկաներից ստուգումներ կազմակերպելու, դրանց դրվածքն ուսումնասիրելու, դասալսումներ իրականացնելու գործում: Կատարել արդյունքների քննարկում և վերլուծություն:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
40.	Անցկացնել դպրոցում բնագիտական առարկաներից թեմատիկ և գործնական աշխատանքների անցկացման, դրանց տետրերի վիճակի ուսումնասիրություն.		ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
	1.Աշխարհագրություն, Քիմիա	հունվար	
	2.Ես և շրջակա աշխարհը, Կենսաբանություն	փետրվար	
	3. Բնագիտություն, Ֆիզիկա	մարտ	
41.	Վերահսկել էլեկտրոնային մատյանների լրացումները. - թեմաների գրանցումն ըստ թեմատիկ պլանի, - տնային աշխատանքների գրանցումը բոլոր դասերի համար, - սովորողների ամենօրյա գնահատումը, - թեմատիկ և գործնական աշխատանքների գնահատումը եռօրյա ժամկետում:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
42.	Ստուգել ուսումնական ծրագրային նյութի կատարողականի վիճակը՝ առարկայի պարտադիր ժամաքանակի, ուսումնական նյութի դասավանդման, տարբեր տեսակի աշխատանքների կատարման և գնահատման համապատասխանությունը հաստատված թեմատիկ պլաններին: Հաշվետվություններով հանդես գալ մանկավարժական խորհրդի նիստերին:	5– 9.12.22թ. 1 – 5.05.23թ.	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ

43.	Կատարել առաջադիմության արդյունքների կիսամյակային, տարեկան և քննական վերլուծություններ: Ներկայացնել հաշվետվություն մասնախմբի և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ:	դեկտեմբեր հունիս	մասնախմբի ղեկավար
44.	Համագործակցելով տնօրենության հետ, կազմակերպել նախաքննական վիճակի ստուգում՝ մաթեմատիկա առարկայից 9-րդ դասարանում: Կատարել վերլուծություն և բացթողումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ իրականացնել հետևողական աշխատանք:	ապրիլ մայիս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
45.	Վերլուծել նոր, փորձարկվող դասագրքերը, քննարկել դրանցում համապատասխանությունը ծրագրային և չափորոշչային դրույթներին: Ներկայացնել փորձագիտական կարծիք:	ըստ անհրաժեշտության	մասնախմբի ղեկավար, անդամներ
46.	Քննարկել 2022-2023ուստարվա հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողի փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգը, քննությունների անցկացման աշխատակարգն ու ժամանակացույցը:	ապրիլ մայիս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
47.	120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների համար ամփոփիչ ստուգողական աշխատանքների կազմակերպում: Յուրաքանչյուր առարկայից կազմել, քննարկել և հաստատման ներկայացնել ստուգողական աշխատանքի տարբերակներ՝ ընդգրկելով սովորողի բացակայած ժամանակահատվածի ուսումնասիրված նյութը:	մայիս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
48.	Կազմակերպել առարկայական խորհրդատվություններ բնագիտական առարկաներից, նախապատրաստել սովորողներին ավարտական քննություններին:	մայիս հունիս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
49.	Անբավարար գնահատված աշակերտներին հանձնարարել ամառային առաջադրանքներ և աշխատանք իրականացնել այդ աշակերտների հետ: Օժանդակել տնօրենությանը վերաքննությունների կազմակերպման աշխատանքներում:	հունիս-օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
50.	Կատարել 2023-2024 ուստարվա նախնական ժամաբաշխում և առաջարկություն ներկայացնել ուսպլանով նախատեսված պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակների վերաբերյալ:	հունիս	մասնախմբի ղեկավար, անդամներ